ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱԶՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 84 - 85 (16382) ՇԱԲԱԹ, 14 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2015 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՋԱՆՔԵՐ Է ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

Նոյեմբերի 10-ին Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ արտաքին քաղաքականության եւ անվտանգության հարցերով Եվրամիության գերագույն կոմիսար Ֆեդերիկա Մոգերինիի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստան-Եվրամիություն համագործակցության ռազմավարական հարցերը: Անդրադարձ կատարվեց նաեւ երկկողմ համագործակցության առաջնահերթությունների, Ասոցիացման պայմանագրի կատարման ընթացքին եւ ընդգծվեց այցեգրային պայմանակարգի ազատականացման գործընթացի եզրափակման կարեւորությունը:

Վրաստանի կառավարության ղեկավարը ընդգծեց, որ այցեգրային երկխոսության հաջող ավարտը հանդիսանում է Եվրամիության հետ Վրաստանի համագործակցության օրակարգի կարեւոր առաջնահերթությունը: Նրա խոսքերով, Վրաստանի կառավարությունը առավելագույն ջանքեր է գործադրում այցեգրային պայմանակարգի ազատականացման ուղղությամբ գործողությունների ծրագրով նախատեսված պահանջների կատարման համար:

Հանդիպմանը առանձնակի ուշադրություն հատկացվեց անվտանգության եւ դիմակայության տարածաշրջաններում Եվրամիության դերի ակտիվացման կարեւորության տեսանկյունից Վրաստանում առկա իրավիճակին: Հանդիպման ավարտից հետո անցկացված համատեղ մամլո ասուլիսում, Ֆեդերիկա Մոգերինին հայտարարեց, որ Վրաստանը պետք է ապահովի անհրաժեշտ քաղաքական միջա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ԳԻՈՐԳԻ ՄԱՐԳՎԵԼԱՇՎԻԼԻ. «ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՌՈՂՋԱՑՆՈՒՄ Է ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ»

Նոյեմբերի 10-ին Թբիլիսիում աշխատանքն սկսեց «Գենդերային իրավահավասարություն՝ մարտահրավերն ու հնարավորությունները եվրոպական հարեւանության քաղաքականության տարածաշրջանում» միջազգային խորհրդաժողովը, որի կազմակերպիչն էր Վրաստանի ԱԳ նախարարությունը Եվրամիության ու ՄԱԿ-ի հետ համագործակցությամբ:

Միջոցառումը բացեց Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին: Խորհրդաժողովին մասնակցում էր եւ ելույթ ունեցավ արտաքին գործերի ու անվտանգության քաղաքականության հարցերով Եվրամիության գերագույն ներկայացուցիչ Ֆեդերիկա Մոգերինին: Նոյեմբերի 10-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ գենդերային իրավահավասարության հարցերով միջազգային խորհրդաժողովի մասնակիցների հետ: Նախագահի հավաստմամբ, քաղաքականության մեջ ավելի մեծ թվով կանանց ներգրավումն առավել առողջացնում է պետական համակարգը: «Կանանց ակտիվացումն առավել առողջացնում է պետական համակարգը: Վիճակագրությունն ու իրականությունը ցույց են տալիս, որ ավելի մեծ քանակությամբ կանանց մասնակցության քաղաքական համակարգը շատ ավելի կայուն է եւ հզոր»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՊԵՏԲՅՈՒՋԵԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՏԱՐԲԵՐԱԿԸ ԿՆԵՐԿԱՅԱՑՎԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-ԻՆ

Նոյեմբերի 12-ին, ելույթ ունենալով խորհրդարանի լիագումար նիստում, Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին, ներկայացնելով 2016 թվականի պետբյուջեի նախագիծը, հայտարարեց, որ հաջորդ տարին կարեւոր նշանակություն ունի, եւ առաջիկայում սպասվում է բավականին լարված բյուջե, որը, նրա հավաստմամբ, կկատարվի եւ նշանակալից ավանդ կներդնի երկրի տնտեսական զարգացման գործում:

«Ներկայացված բյուջեն դեռեւս վերամշակման փուլում է, ընթացքի մեջ է խորհրդարանի կողմից ներկայացված դիտողությունների ու առաջարկությունների վերանայումը: Բյուջեի վերջնական նախագիծը խորհրդարանին կներկայացվի մինչեւ նոյեմբերի 30-ը: Այդ ժամանակահատվածում մենք կշարունակենք հաղորդակցվել խորհրդարանական կոմիտեների, խմբակցությունների առանձին պատգամավորների հետ, որպեսզի առավելագույնս հաշվի առնենք ներկայացված դիտողությունները: Մեզ համար նշանակալից է պահպանել տնտեսական աճի տեմպերը, զարգացնել էկոնոմիկան, ապահովել դրա կայունությունը, կանխագծված ցուցանիշների շրջանակներում պահել արժեզրկումը եւ, միաժամանակ պահպանել մակրոտնտեսական կայունությունը»,- հայտարարեց Խադուրին:

ԳՆԱՀԱՏՈՒՄ

«ՎՐԱՍՏԱՆ» ԹԵՐԹԸ՝ «ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՋԱԿԻՑ» ՏԱՐՎԱ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑ

Նոյեմբերի 13-ին, «Թբիլիսի-Մերիոտ» հյուրանոցում Հանդուրժողականության միջազգային օրվա առթիվ անցկացված «Հանդուրժողականության աջակից» տիտղոսի շնորհման միջոցառմանը, Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին «Հանդուրժողականության աջակից» լրատվամիջոց անվանակարգում հաղթող հայտարարեց «Վրաստան» թերթը: Օմբուդսմենը հաղթողի պատվավոր պարգեւն ու պատվոգիրը հանձնեց «Վրաստան» թերթի գլխավոր խմբագիր Վան Բայբուրթյանին:

Ուչա Նանուաշվիլին իր շնորհավորական խոսքում ընդգծեց, որ «Վրաստան» թերթը արդեն 95 տարի է՝ լույս է տեսնում մեր երկրում, նա ունեցել է դժվարին պահեր, սակայն երբեք չի ընդհատել պարբերականի լույսընծայումը եւ շարունակել է ծառայել վրաց ու հայ ժողովուրդների բարեկամության ամրապնդման, ազգերի միջեւ հանդուրժողականության կուլտուրայի արմատավորման, փոխադարձ սիրո վրա հիմնված հարաբերությունների հաստատման, մեր համաքաղաքացիներին Վրաստանում տեղի ունեցող իրադարձությունների մասին տեղեկատվության հանձնման գործին:

Միջոցառմանը «Հանդուրժողականության աջակից» կոչմանն արժանացան նաեւ Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին, Թբիլիսիի սակրեբուլոյի անդամ Ռիմա Բերաձեն, Ազատ համալսարանը:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

Նոյեմբերի 12-ին Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին հանդիպում ունեցավ Վրաստանում հավատարմագրված դիվանագետների հետ: Հանդիպումը, որը կազմակերպել էր ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, ընթացավ շուրջ մեկ ժամ:

Հանդիպման ավարտից հետո, մարդու իրավունքների հարցերով Վրաստանի նախագահի խորհրդական Կախա Կոժորիձեն հայտարարեց, որ հանդիպմանը քննարկվեցին մի շարք հրատապ հարցեր, առանձնակի ուշադրություն հատ-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՀԱՆԴՈՒՐԺՈՂԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ՀԵՏ

Հանդուրժողականության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շրջանակներում, Վրաստանի հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Պաատա Զաքարեիշվիլին հանդիպում ունեցավ ազգային փոքրամասնությունների ուսանողների հետ:

Հանդիպմանը պետնախարարը խոսեց Վրաստանի էթնիկական եւ կրոնական բազմերանգության նշանակության մասին:

«Հանդուրժողականության օրը եւ հանդուրժողական տրամադրվածությունը կարեւոր նշանակություն ունի վրաց հասարակայնության համար: Վրաստանում իրոք տարբերվում է էթնիկական ու կրոնական բազմերանգությամբ, եւ այս բազմերանգությունն այն հարստությունն է, որով մենք հպարտանում ենք: Միաժամանակ, կան նաեւ մարտահրավերներ, որոնց մասին մենք խոսում ենք եւ միջոցներ ձեռնարկում դրանց կարգավորման համար»,- հայտարարեց Պաատա Զաքարեիշվիլին:

Հանդիպման ավարտին՝ պետնախարարը պատասխանեց պետական լեզվի, ազգային փոքրամասնությունների կողմից ուսուցանվող տարբեր առարկաների, ինչպես նաեւ երկրի տարածքում առկա հակամարտությունների կարգավորման վերաբերյալ ուսանողների հարցերին:

ՀԱՆԴԻՊՈՒՄ

ՔՆՆԱՐԿՄԱՆ ԹԵՄԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՆ ԷՐ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

կացվեց ընտրական օրենսդրության հետ կապված թեմային:

«Հանդիպմանը մեծ ուշադրություն հատկացվեց ընտրական միջավայրի թեմային, այն փոփոխություններին, որոնք պետք է իրականացվեն մեր օրենսդրությունում՝ դրա բարելավման նպատակով»,- հայտարարեց Կոժորիձեն:

Խորհրդականի խոսքերով, դեսպաններն ընդգծեցին նախագահի դրական դերը «Ռուսթավի-2» հեռուստաընկերության շուրջ ծավալվող իրադարձությունների գործում, երբ նա հանդես եկավ հայտարարությամբ եւ կարողացավ լարված իրավիճակը շրջել երկխոսության ուղղությամբ:

«Հանդիպմանը նախագահը խոսեց ընտրական միջավայրի, առաջիկա ծրագրերի, ընտրական տարվա եւ այն սկզբունքների մասին, որոնցով պետք է իրականացվեն ընտրությունները: Այդ գործընթացում, բնականաբար, կարեւոր դեր է հատկացվում ԶԼՄ-ներին: Նախագահը համոզված է, որ առանց ազատ, անկախ լրատվամիջոցների, չի կարելի խոսել ազատ եւ արդարացի միջավայրի մասին»,- հայտարարեց Կոժորիձեն:

ՎՐԱՍՏԱՆ-ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԻՐԱԿԼԻ ՂԱՐԻԲԱՇՎԻԼԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՁԱՆՔԵՐ Է ԳՈՐԾԱԴՐՈՒՄ ԱՅՑԵԳՐԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԿԱՐԳԻ ԱԶԱՏԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

վայրն ու կայունությունը 2016 թվականի խորհրդարանական ընտրությունները ժողովրդավարական եւ ազատ մթնոլորտում անցկացնելու համար: «Համոզված եմ, որ Վրաստանն ի վիճակի է անցկացնել ժողովրդավարական ընտրություններ»,- հայտարարեց նա ու հավելեց. «Քաղաքականության մեջ զգայականությունը քաջ ծանոթ է ինչպես իտալացիներին, այնպես էլ՝ վրացիներին, սակայն զգացմունքները հարկ է սահմանափակել շրջանակներում, իսկ այդ շրջանակներն են՝ ազատ մամուլը, բազմակարծությունը, հարգանքը օրենքի գերակայության նկատմամբ, դատարանի անկախությունը»:

Եվրամիության գերագույն ներկայացուցիչը երկրի քաղաքական ուժերին կոչ արեց հրաժարվել այնպիսի գործողություններից, որոնք արգելքներ են հարուցում երկրի ու հասարակության զարգացմանը: «Քաղաքական բոլոր ուժերը պետք է գործեն կոնստրուկտիվ համագործակցության շրջանակներում»,- հայտարարեց Մոգերինին:

Անդրադառնալով անայցեգրային պայմանակարգի թեմային՝ Ֆեդերիկա Մոգերինին նշեց, որ տարվա վերջին Եվրահանձնաժողովը կպատրաստի հաշվետվությունը, որտեղ կընդգծվի ասոցիացման առումով Վրաստանում ձեռք բերած առաջընթացը: «Իրականացված քայլերը, իրոք, դրական են: Կանխագուշակել չենք կարող, սակայն առաջընթացն ակնհայտ է: Համոզված եմ, որ այդ հարցի շուրջ երկիրը միասնական է»,- նշեց Մոգերինին:

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՆՈԴԱՐ ԽԱԴՈՒՐԻ. «ԿԱՐԵՎՈՐ Է ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՐԱՄԵՏՐԵՐԻ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇԱԿԻ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻՆ»

Վրաստանի ֆինանսների նախարար Նոդար Խադուրին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող Արժույթի միջազգային հիմնադրամի առաքելությանը՝ Մարկ Գրիֆիտի գլխավորությամբ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին 2015 թվականին պետբյուջեի կատարման ընթացքը, այն փոփոխությունները, որոնք կատարվել են բյուջեում, ինչպես նաեւ 2016 թվականի բյուջեի հիմնական պարամետրերը: Հանդիպմանն ընդգծվեց Վրաստանի եւ Արժույթի միջազգային հիմնադրամի միջեւ համագործակցության նշանակությունը, որն իր արտահայտությունն է գտնում մակրոտնտեսական պարամետրերի կանխագծման եւ համապատասխան քաղաքականության ձեւավորման հարցում:

Ինչպես նշեց Նոդար Խադուրին, հիմնադրամի համար էական նշանակություն ունի մակրոտնտեսական պարամետրերի համապատասխանությունը որոշակի չափորոշիչներին: «Մենք ներկայումս աշխատում ենք, որպեսզի խորհրդարանին ներկայացնենք պետբյուջեի վերամշակված տարբերակը: Բացի այդ, շարունակում ենք աշխատել ընթացիկ տարվա պարամետրերի հստակեցման ուղղությամբ»,- հայտարարեց ֆինանսների նախարարը:

ԻՐԱՎԱԿԱՆ

Մ.ՍԱԱԿԱՇՎԻԼՈՒՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ԿՀՍՏԱԿԵՑՎԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՍԿԶԲԻՆ

Նոյեմբերի 12-ին Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին հայտարարեց, որ Վրաստանի նախկին նախագահ Միխեիլ Սաակաշվիլու Վրաստանի քաղաքացիությունից զրկելու հարցի վերջնական եզրակացությունը երկրի գործող նախագահ Գիորգի Մարգվելաշվիլուն կներկայացվի դեկտեմբերի սկզբներին:

Նրա խոսքերով, համապատասխան նամակը Միխեիլ Սաակաշվիլուն հանձնվել է մի քանի օր առաջ՝ Օդեսայում: Հենց այդ պահից սկսվել է չորսշաբաթյա ժամկետի հաշվառումը, որպեսզի, նա վրացական օրենսդրության համաձայն, իր դիրքորոշումը ներկայացնի վերոհիշյալ հարցի կապակցությամբ: «Դեկտեմբերի սկզբներին մենք Վրաստանի նախագահին կներկայացնենք Միխեիլ Սաակաշվիլու Վրաստանի քաղաքացիության դադարեցման եզրակացությունը, որի հիման վրա էլ նա կընդունի վերջնական որոշումը»,- հայտարարեց Թեա Ծուլուկիանին:

Անդրադառնալով երկրի քաղաքացիության դադարեցումից հետո նրա կուսակցական գործունեության թեմային՝ Թեա Ծուլուկիանին նշեց, որ կուսակցությունն ինքն է նշելու, թե ով է լինելու իր անդամը, թեպետ «կան պայմաններ, որոնք բավարարվելու են կուսակցության ղեկավարների եւ կուսակցական աշխատակիցների կողմից»:

ԴԱՏԱՐԱՆԸ ՓՈԽԵՑ ՈՐՈՇՈՒՄԸ ԵՎ ՎԵՐԱԿԱՆԳՆԵՑ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԿԻՆ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Թբիլիսիի քաղաքային դատարանը որոշում էր ընդունել «Ռուսթավի-2» հեռուստաընկերության 100 տոկոսի բաժնետոմսերը նախկին սեփականատիրոջը՝ Քիբար Խալվաշուն, հանձնելու վերաբերյալ:

Միաժամանակ, դատարանի որոշմամբ, հեռուստաընկերության ժամանակավոր կառավարիչներ էին նշանակվել Դավիթ Դվալին եւ Ռեւազ Սաղեւարիշվիլին: Ծագած դիմակայության, ֆինանսական խնդիրների չկարգավորվածության կապակցությամբ, ժամանակավոր կառավարիչները իրավասությունների փոխանցման հավաստագիր էին ձեւակերպել հեռուստաընկերության գլխավոր տնօրենի նախկին տեղակալ Զաալ Ուդումաշվիլու անունով, թեպետ վերջինս հրաժարվեց ընդունել այն: Նշենք, որ վերոնշյալ հավաստագիրը չվավերացվեց նաեւ հանրային ռեեստրի կողմից:

«Ռուսթավի-2» հեռուստաընկերության նախկին ղեկավարությունը ժամանակավոր կառավարիչների նշանակումը բողոքարկող հայց էր ներկայացրել դատարանին:

Թբիլիսիի քաղաքային դատարանի դատավոր Թամար Ուրթմելիձեն, ստեղծված իրավիճակից ելնելով, փոխեց նոյեմբերի 5-ին «Ռուսթավի-2»-ի գործով ընդունած իր որոշումը: Նոր որոշմամբ, դատավորը կանգնեցրեց ժամանակավոր կառավարիչներից Դավիթ Դվալու իրավասությունը, իսկ Ռեւազ Սաղեւարիշվիլու իրավասությունները պահպանվեցին միայն այն պայմանով, որ դրանք լրիվությամբ կփոխանցվեն իրեն, երբ վճռաբեկ դատարանը կընդունի վերջնական որոշում:

Իր հերթին, հանրային ռեեստրը, հիմնվելով Ռեւազ Սաղեւարիշվիլու ներկայացրած հայցի վրա, որով նա դատարանին խնդրում է իրավասությունները փոխանցել հեռուստաընկերության նախկին ղեկավարներ Նիկա Գվարամիային եւ Կախի Դամենիային, Վրաստանի հանրային ռեեստրի գործակալությունը վերականգնեց Նիկա Գվարամիայի՝ որպես «Ռուսթավի-2» հեռուստաընկերության գլխավոր տնօրեն, լիազորությունները եւ Կախի Դոմենիայի՝ որպես հեռուստաընկերության ֆինանսական տնօրեն, իրավասությունները:



ԱՄՆ

ԵՐԿԱՐԱՁԳՎԵՑԻՆ ԻՐԱՆԻ ԴԵՄ ՊԱՏԺԱՄԻՋՈՑՆԵՐԸ

ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբաման մեկ տարով երկարացրել է Իրանի դեմ սահմանված պատժամիջոցների ժամկետը:

«Իրանի հետ մեր հարաբերությունները դեռեւս չեն վերադարձել նորմային: Այդ պատճառով ես որոշեցի, որ անհրաժեշտ է շարունակել ազգային արտակարգ դրության ռեժիմը, որը Իրանի նկատմամբ հայտարարվել է 12170 հրամանագրով»,- հայտարարել է Օբաման:

Պատժամիջոցներից զատ, որոնք վերաբերում են Թեհրանի միջուկային ծրագրին եւ պետք է վերացվեն Իրանի ու միջազգային հանրակցության համապատասխան պայմանավորվածությունների կատարման համեմատ, ԱՄՆ-ը Իրանի դեմ պատժամիջոցներ է պահպանում մի ամբողջ շարք այլ հարցերի կապակցությամբ, ներառյալ՝ «աջակցությունն ահաբեկչությանը» եւ «Թեհրանի հրթիռային ծրագիրը»:

ԵՎՐԱՄԻՈՒԹՅՈՒՆ

ԱՃՈՒՄ Է ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԹԻՎԸ

2015 թվականի հունվարի 1-ից մինչեւ նոյեմբերի 1-ը ԵՄ-ի արտաքին սահմանները հատել են 1,2 մլն անօրինական միգրանտներ: Սա բացարձակ ռեկորդ է ԵՄ-ի պատմության մեջ:

«2015 թվականի հունվարից մինչեւ հոկտեմբերի վերջը, ԵՄ-ի արտաքին սահմանների՝ գրանցված անօրինական հատումների թիվը գերազանցել է 1,2 միլիոնի աննախադեպ նշագիծը»,- նշել է Frontex- գործակալությունը այդ թեմայով տարածած հաղորդագրության մեջ: Դա ավելի քան քառակի շատ է, քան անցած ամբողջ տարում, երբ գրանցվել էր ԵՄ-ի արտաքին սահմանների խախտումների շուրջ 280 հազար դեպք:

Frontex-ը գնահատականներ չի տալիս այն բանի վերաբերյալ, թե քանի դեպք կարող էր չգրանցված մնալ եվրոպական սահմանապահ կառույցների կողմից:

ԻՍՊԱՆԻԱ

ԲԱՆԱՁԵՎ՝ ԿԱՏԱԼՈՆԻԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՎ

Կատալոնիայի խորհրդարանը նոյեմբերի 9-ի նիստում ընդունել է բանաձեւ, որը հռչակում է «կառավարման հանրապետական ձեւով անկախ պետության ստեղծման գործընթացի սկսվելը»: Բանաձեւի օգտին, որը բաղկացած է ինը հոդվածից, քվեարկել են «Միասին «այո»-ի օգտին» կոալիցիայի եւ «Ժողովրդական միասնության թեկնածություն» կուսակցության պատգամավորները, որոնք օրենսդիր մարմնում ունեն բացարձակ մեծամասնություն՝ 72 մանդատ՝ 135-ից:

«Անկախության ձեռքբերման գործընթացը» ենթադրում է ձեւավորել կառավարություն, պետական այլ կառույցներ եւ մշակել սահմանադրություն: Նոր սահմանադրության ընդունումից հետո, անկախությունը կհռչակվի պաշտոնապես: Այս ամենը, Իսպանիայից տարածաշրջանի անջատման կողմնակիցների հաշվարկներով, կպահանջի շուրջ 18 ամիս:

ՀՈՒՆԱՍՏԱՆ

ԳՈՐԾԱԴՈՒԼՆԵՐ՝ ՈՂՋ ԵՐԿՐԻ ՄԱՍՇՏԱԲՈՎ

Հունաստանի երկու խոշորագույն արհմիութենական միավորումներ՝ «Հույն աշխատավորների համընդհանուր համադաշնությունը» եւ «Քաղաքացիական ծառայողների բարձրագույն վարչակազմը», նոյեմբերի 12-ին 24-ժամյա գործադուլ անցկացրին՝ ի նշան խիստ խնայողության միջոցառումների դեմ բողոքի, որոնք երկրի կառավարության կողմից իրականացվում են միջազգային վարկատուների հետ համաձայնեցմամբ: Գործադուլին մասնակցում են երկրի կոմունալ ծառայությունները, նախարարությունների եւ հարկային մարմինների, կենսաթոշակային ֆոնդերի, տեղական ինքնակառավարման մարմինների, բանկերի աշխատակիցները, ուսումնական հաստատությունների պրոֆեսորներն ու դասախոսները, ինժեներներ, իրավաբաններ, նոտարներ ու դեղագործներ:

Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ՈԼՈՐՏ

ՔՆՆԱՐԿՎԵՑԻՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

Վրաստանի վարչապետ Իրակլի Ղարիբաշվիլին հանդիպում ունեցավ գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի նախագահ Կանիաո Վանժեյի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին Վրաստանի եւ հիմնադրամի համագործակցության հարցը, նշվեց, որ գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը Վրաստանի խոշոր դոնորային կազմակերպություններից է, այն Վրաստանում իրականացնում է չորս խոշոր նախագիծ, ընդհանուր առմամբ, 120 միլիոն դոլարի ծավալով: Ներկա դրությամբ, հիմնադրամը ֆինանսավորում է Վրաստանի գյուղատնտեսության արդիականացման, շուկաների մատչելիության եւ կայունության նախագծերը, որոնք ուղղված են երկրի գյուղական բնակչության եկամուտների ավելացմանը:

Վարչապետը հիմնադրամի նախագահին շնորհակալություն հայտնեց կատարած աշխատանքի համար:

Վրաստանի գյուղատնտեսության նախարար Օթար Դանելիայի ու գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի նախագահ Կանիաո Վանժեյի հանդիպմանը նշվեց, որ հիմնադրամի ֆինանսավորմամբ վերանորոգվել է 64 կիլոմետր ընդհանուր երկարությամբ ոռոգման համակարգ, օգնություն ցուցաբերվել գյուղական 80 հազար ընտանիքների: Հիմնադրամի հատկացրած միջոցների նշանակալից մասը ծախսվել է գյուղում աղքատության հաղթահարման նախագծի իրականացման համար:

ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

ԹԵԱ ԾՈՒԼՈՒԿԻԱՆԻ. «ՎՐԱՍՏԱՆԸ ԵՂԵԼ ԵՎ ՄՆՈՒՄ Է ԿԱՅՈՒՆ ԵՐԿԻՐ»

Եվրամիության հանրային ծառայությունների երկրորդ նախագծի բացման արարողությանը, որն անցկացվեց Թբիլիսիի «Ռեդիսոն» հյուրանոցում, Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, անդրադառնալով «Ռուսթավի-2» հեռուստաընկերության շուրջ ծավալված իրադարձություններին, հայտարարեց, որ Վրաստանը եղել եւ մնում է կայուն երկիր:

«Այս գաղափարը բոլորը պետք է ընկալումով ընդունեն, որպեսզի ապրեն հանգիստ եւ խուճապի չմատնվեն»,- հայտարարեց նա:

Անդրադառնալով ընտրությունների անցկացման էլեկտրոնային տարբերակի թեմային՝ Թեա Ծուլուկիանին նշեց, որ Վրաստանը տեխնիկապես պատրաստ է անցկացնել էլեկտրոնային ընտրություններ: Նրա խոսքերով, էլեկտրոնային ընտրությունների տարբերակը հնարավոր կդարձնի ընտրություններին արտասահմանում ապրող Վրաստանի քաղաքացիների մասնակցությունը:

Նշենք, որ վերոնշյալ տարբերակի մշակման հարցում Վրաստանն ակտիվորեն համագործակցում է էստոնիայի հետ:

Եվրամիության հանրային ծառայությունների երկրորդ նախագծի բացման շնորհանդեսին ներկա էին նաեւ էստոնիայի արտաքին գործերի նախարար Մարիա Կալյուրանդը, եվրոպական եւ եվրատլանտյան կառույցների ինտեգրման հարցերով պետնախարար Դավիթ Բաքրաձեն:

ՍԻՐԻԱՑԻ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ ԲԱՑԱՌՎԱԾ ՉԷ

Վրաստանը դեռեւս Եվրամիությունից չի ստացել որեւէ խնդրանք կամ դիմում՝ Սիրիայից փախստականների ընդունման հարցով, թեպետ, եթե նման դիմում ներկայացվի, ապա Վրաստանի համապատասխան գերատեսչություններն այն կքննարկեն:

Այդ մասին հայտարարեց Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին: «Եթե նման դիմում ներկայացվի, ապա այն կքննարկվի, եւ կառավարությունը որոշում կընդունի»,- նշեց Ծուլուկիանին՝ մեկնաբանելով ԶԼՄ-ներում տարածված տեղեկատվությունն այն մասին, որ Վրաստանի հարցով Եվրոպական խորհրդարանի զեկուցող Անդրեյ Մամիկինը կարծիք է հայտնել այն մասին, որ Վրաստանը որպես Եվրամիության հետ համերաշխության նշան, հնարավոր է որոշում ընդունի սիրիացի փախստականների մի մասին Եվրոպայից ընդունել իր տարածքում:

Թեա Ծուլուկիանու խոսքերով, Վրաստանը երբեք չի հրաժարվել օգնություն ցուցաբերել սպառնալիքի տակ գտնվող կանանց եւ երեխաների, թեպետ «ներկա դրությամբ, այդ թեման չի քննարկվում»: Թեմային արձագանքեց նաեւ Վրաստանի փախստականների եւ տեղաբաշխման հարցերով նախարար Սոզար Սուբարին: «Ի պատասխան մեր Եվրախորհրդարանի բարեկամի, ասեմ, որ մենք արդեն դրան ձեռնամուխ ենք եղել եւ, երբ ես կոնկրետ թվերը ներկայացրի Եվրոպայի խորհրդի մարդու իրավունքների հարցերով կոմիսարին, նա զարմացավ եւ ասաց, որ շատ ավելի զարգացած երկրներ այդ թվով փախստականներ չեն ընդունել: Մենք արդեն ընդունել ենք ավելի քան 4 հազար փախստականի, թեպետ նրանց մեծ մասը չցանկացավ մեզ մոտ ստանալ կարգավիճակ: Համապատասխան կարգավիճակ եւ ապաստարան է ստացել 1038 փախստական»,- ասաց Սոզար Սուբարին:

ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐ

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԱՌՆՉՎՈՂ ՀԱՐՑԵՐՆ ԷԻՆ

Վրաստանի արտաքին գործերի նախարար Գիորգի Կվիրիկաշվիլին հանդիպում ունեցավ պաշտոնական այցով Թբիլիսիում գտնվող, մարդու իրավունքների հարցերով Եվրոպայի խորհրդի կոմիսար Նիլս Մուժնիեքսի հետ:

Հանդիպմանը կողմերը քննարկեցին մարդու իրավունքների պաշտպանության եւ այդ առումով տեղի ունեցող գործընթացները Վրաստանի բռնազավթված տարածքներում:

Նույն օրը, Եվրոպայի խորհրդի կոմիսարի հետ հանդիպում ունեցավ նաեւ Վրաստանի արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին:

Կայացած հանդիպումներում խոսվեց Վրաստանի եւ Եվրամիության համագործակցության եւ Եվրամիության հետ Ասոցիացման համաձայնագրի՝ երկրի բռնազավթված տարածքների բնակչության վրա դրա ազդեցության մասին: Կողմերը քննարկեցին նաեւ տարածաշրջանային անվտանգությանն առնչվող հարցեր:

ԷՆԵՐԳԵՏԻԿԱ

ԲՆԱԿԱՆ ԳԱԶ՝ ԻՐԱՆԻՑ

Ինչպես հայտարարեց Վրաստանի էներգետիկայի նախարար Կախի Կալաձեն, մոտ ժամանակներում Վրաստանը մտադիր է Իրանից գնել բնական գազ:

Նրա խոսքերով, ներկա դրությամբ, Թբիլիսիի եւ Թեհրանի միջեւ հարաբերությունները նորմալ մակարդակի վրա են: Ինչպես նշեց Կախի Կալաձեն, Վրաստանն ուրիշ այլընտրանք, քան Ադրբեջանի կամ Հայաստանի տարանցմամբ Իրանի գազ ներկրելը, չունի: Նախարարի խոսքերով, նման նախագիծը կարող է լինել երկարաժամկետ, թեպետ դրա համար կպահանջվի մանրակրկիտ աշխատանք:

Կախի Կալաձեի հավաստմամբ, կառավարությունը հնարավորինս անելու է, որպեսզի իրանական ռեսուրսները օգտագործվեն ի բարօրություն Վրաստանի: «Մենք հնարավորինս պետք է անենք, որպեսզի Իրանի ռեսուրսները ներկրենք Վրաստան, որպեսզի ընդլայնենք մրցակցությունը: Տվյալ դեպքում, խոսքը վերաբերում է միայն մրցակցային գներին: Եթե Իրանը առաջարկի նորմալ գին, բնականաբար, այն կհայտնվի մեր շուկայում»,- հայտարարեց Կալաձեն:

Նշենք, որ վերջերս Կախի Կալաձեն հանդիպում ունեցավ Հայաստանի էներգետիկայի եւ բնական ռեսուրսների նախարար Երվանդ Զախարյանի հետ: Հանդիպմանը կողմերը խոսեցին էլեկտրաէներգիայի տարանցման, ինչպես նաեւ Իրանից բնական գազ գնելու հեռանկարների մասին:



ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ Է 542 ՄԻԼԻՈՆ ԼԱՐԻԻ ՆԱԽԱԳԻԾ

Վրաստանի մունիցիպալային զարգացման հիմնադրամը ներկայացրեց հաշվետվություն, ըստ որի, վերջին երեք տարիների ընթացքում, երկրի տարածաշրջաններում իրականացվել է 1908 նախագիծ, ընդհանուր առմամբ, 542 միլիոն լարիի արժողությամբ: Վերոնշյալ գումարից 318 միլիոնը ծախսվել է ավտոմոբիլային ճանապարհների շինարարության եւ վերանորոգման 682 նախագծի իրականացման համար, 66,5 միլիոնը՝ ջրամատակարարման համակարգի վերականգնմանն ուղղած 431 նախագծի համար եւ 28,5 միլիոնը մանկապարտեզների շինարարության ու վերանորոգման նպատակով 169 նախագծի իրականացման համար:

Բացի այդ, գյուղի աջակցության ծրագրի շրջանակներում, 2013-2015 թվականներին հատկացվել էր 150 միլիոն լարի: Այդ գումարով երկրի 3500 գյուղերում իրականացվել է 20087 նախագիծ:

ՁՄԵՌԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐԸ՝ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 30-ԻՑ

Վրաստանի հանրային դպրոցներում ձմեռային արձակուրդները կսկսվեն դեկտեմբերի 30-ից եւ կշարունակվեն մինչեւ հաջորդ տարվա հունվարի 14-ը ներառյալ:

Ինչ վերաբերում է մասնավոր դպրոցներին, ապա նրանց վերապահված է ձմեռային արձակուրդների ժամկետը ինքնուրույն սահմանելու իրավունք:

«ՀԱՅՐԵՆԱՍԵՐՆԵՐԻ ԱԼՅԱՆՍԻ» ԲՈՂՈՔԻ ՑՈՒՅՑ՝ ԹԲԻԼԻՍԻՈՒՄ

«Ո՛չ կեղծված ընտրություններին» այս կարգախոսով Թբիլիսիում անցկացվեց «Հայրենասերների ալյանսի կողմնակիցների ցույց: Բողոքի ակցիայի մասնակիցների խոսքերով, իրենց գլխավոր պահանջն է ընտրական միջավայրի փոփոխումը, ինչպես նաեւ պաշտպանության նախարարի եւ բնապահանության նախարարի պաշտոնաթողությունը, քանի որ վերոնշյալ պաշտոնատար անձինք, ալյանսի ղեկավարների կարծիքով, անմիջականորեն մասնակցել են Սագարեջոյում ընտրությունների կեղծման կազմակերպմանը: Տարածված տեղեկատվության համաձայն, «Հայրենասերների ալյանսի» մի շարք ղեկավարներ, մասնավորապես, Իրմա Ինաշվիլին, Ադա Մարշանիան եւ Էմզար Կվիցիանին կառավարության վարչական շենքի մոտ սկսել են հացադուլ: Նրանց միացել են շուրջ երկու տասնյակ կողմնակիցներ:

ՍԱՀՄԱՆԻ ԱՊՕՐԻՆԻ ԽԱԽՏՈՒՄ ԿԱՐՃԱԽՈՒՄ

Վրաստանի ՆԳ նախարարության սահմանային ոստիկանության քննչական օպերատիվ գլխավոր վարչության, ցամաքային սահմանի պաշտպանության դեպարտամենտի եւ պետական անվտանգության ծառայության հակաահաբեկչական քննչական օպերատիվ միջոցառումների արդյունքում, երկրորդ վարչության (Ախալցիխե) վեցերորդ սեկտորի (Կարծախ) եւ հինգերորդ սահմանային սեկտորի (Նիալա) հատվածում, Վրաստանի պետական սահմանն ապօրինի խմբային հատման փորձի մեղադրանքով, ձերբակալվել է Սոմալիի տասը քաղաքացի:

Տարվում է հետաքննություն, որը իրականացնում է սահմանային ոստիկանության քննչական օպերատիվ գլխավոր վարչությունը:

ԵՐԿՈՒ ԱՅՑԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՁԱԳԱՆՔ

ՎՐԱՍՏԱՆԸ ՀԱՐԵՎԱՆ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԵՏ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՍԿՍՈՒՄ Է ԾՈՒԾԱԲԵՐԵԼ ԻՐԱՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Անդրկովկասում իրադրության նման ընթացքը բավականին վաղուց է, ինչ չի նկատվել կարճ ժամանակահատվածում. Թբիլիսի ժամանեցին Հայաստանի նախագահ Սերժ Սարգսյանը, ապա՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը:

Վերոնշյալ երկու այցերը միավորված էին ընդհանուր թեմայով, ավելի ստույգ, հիմնախնդրով՝ կապված Վրաստանի տարանցիկության հնարավորությունների, գործընկերության նոր հնարավորությունների բացահայտման կամ հին ուղղությունների ամրացման հետ: Վրաստանն ունի թե' Հայաստանի եւ թե' Ադրբեջանի համար կարեւոր տարանցիկ ուղիներ, սակայն դրանք տարբերվում են: Դա Հայաստանի համար ստեղծված իրավիճակից ելք է Ռուսաստան, երբ երկիրը շրջափակված է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից: Գոյություն ունի նաեւ անփոխարինելի ճանապարհ, որը հաճախ անվանում են «կյանքի ճանապարհ», որով Հայաստանը կապված է Իրանի հետ:

«Ադրբեջանի համար,- ինչպես հայտարարեց տնտեսագետ Ֆուադ Ալիզադեն,- Վրաստանը Թուրքիա տանող ճանապարհի դարպասն է, որի միջոցով պաշտոնական Բաքուն միջազգային շուկա է դուրս բերում իր ածխաջրածնային ռեսուրսները՝ նավթն ու բնական գազը»: Դեռ վերջերս հաղորդակցության այդ ուղին համարվում էր ադրբեջանա-վրացա-թուրքական «անկեղծ համաձայնության» ձեւավորման գործոններից մեկը, որը, առանձնապես Սաակաշվիլու նախագահության օրոք, ընդունեց ձեւեր՝ ուղղված տարածաշրջանում Ռուսաստանի ազդեցության թուլացմանը: Իսկ միջազգային պատժամիջոցների ճնշման տակ Իրանի գտնվելն է'լ ավելի էր շրջափակում Հայաստանը: Ընդ որում, բնականաբար, Վրաստանն ընթանում էր Ադրբեջանի էկոնոմիկայի հետ տնտեսական ինտեգրացման առավել խորացման ուղիով:

Դժվար է Բաքու-Թբիլիսի-Անկարա ալյանսն ընկալել որպես պատմականորեն պայմանավորված կայուն գործոն, թեկուզ նրա համար, որ երկու իրադարձությունները՝ Վիեննայում միջուկային դոսյեի հարցով պայմանագրի ստորագրումից հետո, պատժամիջոցների ճնշումից Իրանի դուրս գալը եւ Հայաստանի անդամակցությունը Եվրասիական տնտեսական միությանը, փոխում են Անդրկովկասում աշխարհաքաղաքական իրավիճակը:

Ինչպես հայտարարեց Թբիլիսիի Իլիայի պետական համալսարանի արեւելագիտության ինստիտուտի պրոֆեսոր Գիորգի Սանիկիձեն, հենց Վրաստանի եւ Իրանի հարաբերությունները կարող են նոր խթան ստանալ ոչ միայն Վրաստանի սեւծովյան նավահանգիստների միջոցով իրանական ապրանքների Եվրոպա արտահանման հարցում, այլեւ որպես տարանցիկ երկիր՝ իրանական գազի համար, սակայն միայն Հայաստանի եւ ոչ թե Ադրբեջանի տարանցմամբ, քանի որ միայն դա Վրաստանին կարող է դուրս բերել ադրբեջանա-թուրքական ալյանսի պատանդի վիճակից: «Մեր հարաբերությունները կդիմանան ցանկացած փորձությանը»,- հայտարարեց Վրաստանի նախագահ Գիորգի Մարգվելաշվիլին Ադրբեջանի ղեկավար Իլհամ Ալիեւի հետ համատեղ մամլո ասուլիսում, վերջինիս ս.թ. նոյեմբերի 5-ին Վրաստան կատարած պաշտոնական այցի ժամանակ: Իր հերթին, Իլհամ Ալիեւը Վրաստանն անվանեց «Մերձավոր ռազմավարական գործընկեր»՝ նշելով, որ ադրբեջանա-վրացական օրակարգում «շատ են հարցերը, որոնք լուծման կարիք ունեն» եւ, որպես օրինակ, նախագահն անվանեց «երկու պետությունների տարանցիկության հնարավորությունը»:

Բանն այն է, որ Թբիլիսիին պետք չէ ընտրություն կատարել Մոսկվայի, Բաքվի, Երեւանի կամ Թեհրանի միջեւ «կամ-կամ» սկզբունքով: Նրա համար կարեւոր է «եւ-եւ»-ը, որպեսզի իր դիրքերն ամրացնի՝ որպես տարածաշրջանային էներգետիկական կարեւորագույն փոխադրիչ: Վերոնշյալ երկրներից միաժամանակ ստանալով գազ եւ մասնակցելով «Հյուսիս-Հարավ» տրանսպորտային լայն միջանցքի ստեղծմանը, որը կարող էր միավորել Ռուսաստանը, Վրաստանը, Հայաստանն ու Իրանը, Վրաստանի մասնակցությունը միաժամանակ երկու ալյանսներում՝ Վրաստան-Հայաստան-Իրան եւ Թուրքիա-Վրաստան-Ադրբեջան, նկատելիորեն կամրացնի նրա աշխարհաքաղաքական դիրքը: Մեթոդաբանության տեսանկյունից իրավիճակի նման զարգացումը կանխագծված է, թեպետ ենթատեքստում, ինչպես կարելի էր սպասել, ձեւավորվում են «սուր սյուժեներ»: Այսպես, Բաքվի ԶԼՄ-ները սրությամբ արձագանքեցին Վրաստանի էներգետիկայի նախարար եւ փոխվարչապետ Կախի Կալաձեի «գաղտնի» հանդիպումը, «Գազպրոմ»-ի ղեկավար Ալեքսեյ Միլլերի եւ նրա՝ Իրանի հետ պաշտոնական կապերին: Ավելի վաղ, Կալաձեն հայտարարել էր ռուսական եւ իրանական գազի ներբերման ավելացման անհրաժեշտության մասին, ընդ որում, երկու դեպքերում էլ՝ Հայաստանի տարածքով, ընդգծում է Haggin.az-ը: Ընդ որում, նա խոսում էր այն մասին, որ «Ադրբեջանի գազը բավական չէ, եւ այն չի կարող ապահովել բնական գազի՝ Վրաստանի աճող պահանջները»:

Ճիշտ է, գոյություն ունի վարկած, ըստ որի, Կալաձեի «դեմարշը» իբր թե կապված է Թբիլիսիի մտադրությանը, հասնել Բաքվից մատակարարվող գազի սակագնի նվազեցման: Սակայն, եթե դա անգամ «խաղի» իրական տարրն է, ապա այն բազմանշանակ է, քանի որ նախկինում Վրաստանն Ադրբեջանի նկատմամբ միաժամանակ չի խաղարկել երեք «խաղաթուղթ» իրանականը, հայկականը եւ ռուսականը: «Դուք գտնում եք, որ դա պատահականությո՞ւն է»,- հարցադրում է Haggin.az պորտալը, եւ ինքն էլ պատասխանում. «Մենք, բնականաբար, չենք բացառում, որ տվյալ պարագայում քաղաքական բաղադրիչը կարող է կատարել գլխավոր դեր, ինչի ապացույցը Վրաստանի իրական «տիրոջ»՝ Բիձինա Իվանիշվիլու բացակայությունն էր Թբիլիսիում Ալիեւի Վրաստան այցելության օրերին: Բայց չէ՞ որ ընդամենը մի քանի օր առաջ ինքը չհրաժարվեց սիրով դիմավորել «մեր բարեկամ երկրի՝ Հայաստանի» նախագահին: Մի խոսքով, Վրաստանը հարեւան Ադրբեջանի եւ Հայաստանի հետ հարաբերություններում սկսում է ցուցադրել «նպատակամղված եսասիրություն», հավանաբար գիտակցելով, որ ժամանակն է դուրս գալ Բաքվի, ՆԱՏՕ-ի եւ ԵՄ-ի ստվերից՝ իրականացնելով ինքնուրույն արտաքին քաղաքական կուրս, որը, առաջին հերթին, համապատասխանում է ազգային շահերին:

ՍՏԱՆԻՍԼԱՎ ՏԱՐԱՍՈՎ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԿԱՐԱՅԱՆ - 100

ՈՒՍԱՆԵԼԻ, ԲԱՅՑ, ԾԱՎՈՔ, ՄՈՌԱԾՎԱԾ

Մեր հրապարակումը ոչ միայն տուրք է վիրահայ ճանաչված բանաստեղծ Հովհաննես Կարայանի ծննդյան 100-ամյակի հիշատակին, այլեւ՝ նրան մոռացության մատնվածների շարքերից հանելու փորձ...

Հայ հոգեւոր մշակույթի երախտավորներից շատերին պատմական ճակատագիրը հաճախ ստիպել է ծառայել երկու հայրենիքի: Հովհաննես Կարայանը այդ երախտավորներից մեկն է:

Նա ծնվել է 1915թ., Թիֆլիսում, հայտնի թարգմանիչ եւ հասարակական գործիչ Ղազարոս Կարապետյանի ընտանիքում, որտեղ վրացերենն ընդունված էր հայերենի հետ համահավասար: Փոքրիկ Հովհաննեսի մեջ հայրը սերմանում է սեր դեպի երկու հնագույն ժողովուրդների գրականությունը: Արդեն դպրոցական տարիներից, Հովհաննեսը գրում է բանաստեղծություններ ու կատարում թարգմանություններ Ի.Ճավճավածեից («Գարուն», «Բանվոր»...): Նրա առաջին երախայրիքները տպագրվել են ժամանակի հեղինակավոր «Կարմիր ծիլեր» հանդեսում: Մանկուց, սովորելով նկարչական ուսումնարանում, զուգահեռաբար զբաղվել եւ նաեւ նկարչությամբ: 1944-1985 թթ. Կարայանը թղթակցել է «Սովետական Վրաստան» թերթին:

Բանաստեղծը վախճանվել է 1986թ. եւ թաղված է ծննդավայր Թբիլիսիում:

Անշուշտ, մեծ հանդգնություն էր 22-ամյա երիտասարդ բանաստեղծին ձեռնամուխ լինելու Մեծն Շոթայի «Ընձենավորի» թարգմանությանը: Բայցեւ, հանդուգն ձեռնարկը պսակվում է հաջողությամբ: Շուտով, ժամանակի հայալեզու մամուլի էջերում («Արշավ», «Կարմիր ծիլեր» «Սովետական Վրաստան») լույս է տեսնում յոթ հատված Կարայանի կողմից հայերեն թարգմանված «Ընձենավորից»: Պոեմի ամբողջական թարգմանության համար, 1985-ին Կարայանը արժանանում է Վրաստանի գրողների միության՝ Ի.Մաչաբելու անվան պետական մրցանակի: Երիտասարդ տարիներից նա միաժամանակ ստեղծագործում է հայերեն եւ վրացերեն: Նրա «Աբդուլա» պատմվածքը, «Եղբայրության երգը» բանաստեղծությունը՝ գրված վրացերեն, ժամանակին ստացան վրաց ընթերցողի արժանի արձագանքը: 1970-ին վրացերեն լույս է տեսել նրա «Իմ վրացերենը» բանաստեղծական ժողովածուն: Կարայանը, հաճախ, ի արձագանք հոբելյանական տարեթվերի, մամուլում երախտիքի խոսք է հղել վրաց մշակույթի երեւելիներ Ի.Ճավճավածեի, Ա.Ծերեթելու, Վ.Փշավելայի, Ն.Բարաթաշվիլու, այլոց մասին:

Կարայանի թարգմանական աշխարհում կան նմուշներ նաեւ ռուս, ուկրաինական, օսական պոեզիայից: Թբիլիսիի Ստ.Շահումյանի անվան պետական հայկական դրամատիկական (այժմ՝ Պ.Ադամյանի անվան) թատրոնում բեմադրվել է Կարայանի թարգմանած, Զուրաբ Անտոնովի «Արեւի խավարումը Վրաստանում» պիեսը: 1948թ. Կարայանի թարգմանական վաստակը արժանիորեն գնահատվում է՝ նա դառնում է ԽՍՀՄ գրողների միության անդամ:

«Պոեզիան անկեղծ զգացմունքների, ոգեշունչ թռիչքների, հույսի ու խոհի միաձույլ բռնկման աշխարհ է»,- համոզված է Կարայան արվեստագետը: Ասվածի հավաստումը նրա «Հայրենական», «Սլացում», «Ձայն վրաց հողից»... ժողովածուներն են, ուր փորձում է գրչով հավատարիմ մնալ այդ հավատամքին:

Կարայանի չափածո ստեղծագործության համար բնութագրական է «առարկայական» հիմք ունեցող փոքրիկ սյուժետային բանաստեղծությունը, ուր, վարպետորեն, կոնկրետ զգայական արտահայտություն է ստանում առաջին հայացքից, կարծես, աննշան թվացող դիպվածը («Մորս հետ»,«Մայրը», «Գոգոլն էր եկել...», «Թող ծիծառ լինեմ», «Քուռն ու գետափնյան»...): Արդեն «Հայրենական» ժողովածուում (1948թ.) նա դրսեւորում է իրականությունը սեփական աչքերով դիտելու եւ ցուցադրելու իր բանաստեղծական ունակությունը («Արեւի քանդակը», «Դուրյանի հետ», «Պարգեւ», «Եղեւնի», «Թիթեռ»): Նրանում բանաստեղծը բնականորեն ներկայացնում է նաեւ պատերազմից հետո «բերքի երգը» հնչեցնող խաղաղ շինարարին...

Կարայան բանաստեղծի արտահայտչական եղանակը բոլոր ժողովածուներում բնութագրվում է սրտաբուխ եւ սկզբունքային խոսքով, կյանքը մշտական շարժման մեջ տեսնելու ընկալումով, քնարական հերոսի անարատությամբ, նրա բարոյական ազնիվ նկարագրով, սիրո զգացմունքի խորությամբ ու անմիջականությամբ («Առաջին սերը», «Դու», «Մինչեւ վաղը», «Վերք»...):

Բնությունը մարդու անբաժանելի մասն է Կարայան հեղինակի պոեզիայում: Ավելին, այն յուրովի շնչավորված եւ իմաստավորված է: Դաշտում ընկած լեռ քարի մեջ («Քարը») պոետը տեսնում է վիթխարի ուժ, ինչը մարդու կամքով ծառայում է նրան իր կյանքի տարբեր՝ ուրախ եւ տխուր հանգամանքներում:

Պոետը ներշնչված է ծննդավայրի, նրա բազմազգ ժողովուրդների, մասնավորապես, հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությամբ: Նա սիրով գիտակցում է, որ ինքն այդ բարեկամության կրողն ու պահպանողն է, որ իր բախտի օրոցքը գրկել են Մասիսն ու Ղազբեգը («Մասիս ու Ղազբեգ»): Հենց այդ գիտակցությամբ է ներթափանցված նրա «Ճախրենք, իմ սիրտ...» քնարական բանաստեղծությունը: Ընթերցողն այստեղ տեսնում, լսում ու զգում է Քռի կարկաչը, լեռնային հովի շշունջը, Թումանյանի ժպիտը, Իլիայի շշնջոցը...

Նուրբ հույզերով են իմաստավորված Կարայանի՝ մորը, մանուկ աշխարհին նվիրված «Մայրական», «Ծաղիկների հետ» շարքերը եւ խորին դառնությամբ՝ գրական վատառողջ երեւույթները ծաղկող «Ծիծաղի միջից» շարքը: Պոեզիայի մասին ուշագրավ խոհերում, որ արտահայտում է «Ծիծաղի միջից» շարքում, բանաստեղծը խորապես քննում է իր բանաստեղծական պատասխանատվության մասին եւ փորձում կյանքի լուսավոր ձգտումներով պարզել նրա հետագա ուղին:

Բազմազան է բանաստեղծի ներկապնակը, գույները, հասուն՝ հուզաշխարհը եւ ամենակարեւորը՝ ներդաշնակ մեր հոգուն, մեր ցանկություններին ու երազանքներին:

Կարդանք, նորից ու նորից վարակվենք մեզ կյանքի ու մարդու հանդեպ Սեր, Հավատ ու Բարություն ներշնչող Կարայանական պոեզիայով:

ՋՈՒԼԻԵՏԱ ԲԱԴԱԼՅԱՆ

ԿՐԹԱԿԱՆ

ՆՈՐ ՆԱԽԱԳԻԾ՝ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Վրաստանի ՆԳ նախարարության արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությունը Թբիլիսիում սկսել է նոր «Արտակարգ իրավիճակների կառավարման գործակալությունն անվտանգ դպրոցի համար» նախագծի իրականացումը:

Նախագծի շրջանակներում, երկու ամսվա ընթացքում գործակալության գլխավոր վարչությունում տեսական ուսուցում կանցկացվի Վրաստանի դպրոցների 800 մանդատուրների եւ մանկավարժների համար:

Ինչպես տեղեկացրին ՆԳ նախարարությունում, դասընթացների նպատակն է ունկնդիրներին ծանոթացնել քաղաքացիական անվտանգության եւ արտակարգ իրավիճակների կառավարման տեսական հարցերին: Նրանք աստիճանաբար կներգրավվեն տարբեր դպրոցներում ցուցադրական դասընթացներին, որի արդյունքում, ձեռք կբերեն արտակարգ իրավիճակներում գործելու գործնական ունակություններ:

Գլխավոր վարչությունում առաջին վարժանքին մասնակցեցին տարբեր դպրոցների 36 մանդատուր եւ դասական գիմնազիայի երեք մանկավարժ: Գործակալության տնօրեն Զվիադ Կացաշվիլին դասընթացներ ավարտածներին հանձնեց համապատասխան հավաստագրեր:

Մանդատուրների եւ մանկավարժների տեսական եւ գործնական նախապատրաստումը ծրագրված է իրականացնել երկրի բոլոր տարածաշրջաններում: